

34

4 - 33

ԹՐԱՆԱԿԱՆ ԲՈՒԺ ՏԵՂՄԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՔՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՆԻ

ԳԻՐԱ N 17

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՑԻՆՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՅ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Որենքների մատչելի պարզութանություն)

1 MAR 20

6705 YAM 11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՁԵՐԿՐՆԵՐԻ, ԱՒԱՑԵՐ.

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

34

4-33

Կ

ԳԻՐՔ № 17

169

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ողենքների մատչելի պարզաբանություն)



126/3 - 57

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1928

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ուենեների մասչելի պարզաբանություն)

Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակը և կարմիր Նավատորմը միշտ կոմունիստական կուսակցության և Խորհրդակին իշխանության առանձին ուշադրության առարկան են լեզել և այդ հասկանալի ին:

Բանվորա. Գյուղացիական կարմիր Բանակը (ԲԳԿԲ) մեր սոցիալիստական խորհրդակին հանրապետությունների Միության պաշտպանն է:

Միություն ասելով պետք է հասկանալ Ռուսաստանի, Ռւկըայնալի, Բելառուսիայի, Անդրկովկասյան (Վրաստան, Հայաստան և Ադրբեյջան), Ուզբեկստանի և Թուրքմենստանի սոցիալիստական հարապետությունների միությունը. Կարմիր Բանակը լիակատար՝ գիտակցությամբ պաշտպանում է պլորետարական պետության և աշխատավոր ժամաների շահերը:

Վոչ մի լերկուում բանակը այնպես չի կապված լայն մասսաների հետ, ինչպես մեր Կարմիր Բանակը. Վ. Լենինը դեռ 1919 թ., խոսե-

ՀԱՅՈՐԴԻԿՐԱՔԻ Ի ՏՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4427
ԳՐԱՆԵՐ. 837 գ., ՏԵՐԱԺ 1600

լով կարմիր Բանակի մասին, այսպես և վորուշում նրա ելությունը:

«Առաջին անգամ պատմության մեջ Բանակի կառուցվում է խորհուրդների և բանակի փոխադարձ մերձեցման, անբաժան մերձեցման, կարելի յեւ ասել՝ անբաժան միաձուլության հիմունքներով։ Խորհուրդները համախմբում են բոլոր աշխատավորներին ու շահագործվածներին, և բանակը կառուցվում է սոցիալիստական պաշտպանության և գիտակցականության հիման վրա» (Ն. Լենին—Հատ. XVI, յեր. 68):

Խորհրդային իշխանությունը կարմիր բանակացներին և նրանց ընտանիքներին տալիս է մի շարք իրավունքներ ու արտօնություններ, վորը չեն վայելում մյուս քաղաքացիները։ Ամեն մի կարմիր բանակացն պիտի լավ ըմբռնի, լավ հասկանա այն բոլոր որենքները, վորոնք վերաբերում են նրան։

Այս գրքույկի նպատակն է մատչելի լեզվով պարզաբանել Խորհրդային իշխանության կողմից հրատարակված այն որենքները, վորոնք վերաբերում են կարմիր բանակայիններին և նրանց ընտանիքներին։

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը դեռ 1924 թ. հոկտեմբերի 20-ին հրատարակել է որենքների մի շատ

կարևոր հավաքածու (որենսգիրք), վորակ զետեղված են այն բոլոր որենքները, վորոնք վերաբերում են բանվորագլուղացիական կարմիր Բանակի և կարմիր Նավաստրմի զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների արտօնություններին և առավելություններին (Որենք. Ժող. 1924 թ. № 21):

Այդ արտօնություններն ու առավելությունները որենսգիրքը վերապահում են կարմիր բանակայիններին և նրանց ընտանիքներին զանազան ասպարեզներում։

1. Աշխատավորական հողոգտագործման և գյուղատնտեսության,
2. Աշխատանքի սոցիալական ապահովության,

3. Փողովրդական լուսավորության,
4. Փողովրդական առողջապահության,
5. Հարկերի և տուրքերի,
6. Բնակարանայինն,

7. Իրավական և նյութական վիճակի վարչական և գատական պաշտպանության և այլն։

Նախքան այդ արտօնությունների վրա կանգ առնելլ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք որենքը ինչպես եւ հասկանում եւ ում եւ համարում իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող տնձ, և ովքեր են համարվում կար-

միը բանակալինի ընտանիքի կազմի մեջ մտնողներ:

ՈՎ Ե ՎԱՅԵԼՈՒՄ ՈՐԵՆՔԻ ԱՐՏՈՆՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ.

Իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք նրանք են, վորոնք կանչված են ծառայելու կարմիր բանակի կադրային մասերում։ Այս տեսակետից զինվորական ծառայության մեջ գտնվող են համարվում։

ա) Այն անձինք, վորոնք կանչված են բանակ զինվորական պարհակը կատարելու կարգով և վորոնք դեռ չեն անցել նրանց համար որենքով սահմանված ծառայության ժամանակամիջոցը։

բ) Կամավորները, վորոնք զինվորական ծառայության են մտել նախքան նրանց հասակակիցներին կարմիր բանակի շարքերը կանչելը։

գ) Այն անձինք, վորոնք վերջացրել են պարտադիր զինվորական ծառայությունը և կամավոր կերպով մնացել են բանակում վորոշ ժամանակով. (այդպիսի դեպքերում նրանք առհասարակ տալիս են ստորագրություն)։

դ) Հրամանատարական, վարչական, քաղաքական, բժիշկական, և անամսաբուժական կազմի

անձինք, վորոնք զինվորական ծառայության մեջ են գտնվում մինչև վորոշ հասակի հասնելը կամ դրանից հետո շարունակում են մնալ ծառայության մեջ կամավոր կերպով, վորոշ ժամանակով։

ե) Այն անձինք, վորոնք աերքիտորիալ գորամասերի կազմի մեջ են մտնում կամ կանչվում են նախազորակոչային պատրաստության։

Բացի սրանից նաև այն անձինք, վորոնք անորոշ ժամանակով արձակուրդ են ստանում, գրտնվում են պահեստում կամ ծառայությունից իսպառ արձակված են, — վորոշ դեպքերում։

Վերոհիշյալ բոլոր անձինք վայելում են այն բոլոր իրավունքներն ու արտօնությունները, վորոնք որենքով սահմանված են նրանց համար. բացի սրանից, այդ իրավունքներից ու արտոնություններից ոգտվում են և նրանց ընտանիքները։ Բանվորագյուղացիական իշխանությունը գիտակցում ե, վոր բանվորին, գյուղացուն կամ ծառայողին բանակ կանչելու պատճառով նրա անտեսությունը ժամանակավորապես զրկվում է աշխատող ձեռքից. ընտանիքից հեռանում ե յերիտասարդ, կենսունակ աշխատող ուժը։ Առանձնապես այդ նկատվում ե աշխատավոր գյուղացիական ընտանիքում։ Յեզ Խորհրդավոր իշխանությունը ոգնության ե հասնում նրան ու

տալիս ե մի շարք արտօնություններ ու առավելություններ:

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Որենքը խոկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց ընտանիք ասելով հատկանում ե տարբեր աստիճանների ազգակցության այն անձանց աշխատավորական միությունը, վորոնք միասին են ապրում և մի տընտեսություն են վարում կամ՝ ընդհանուր միջոցներով են ապրում։ Այդ տեսակետից ընտանիքի կազմի մեջ մտած համարվում են կարմիր բանակալինը, նրա ամուսինը, զավակները, ծնողները, յեղբարներն ու քույրերը, նաև այն անձինք, վորոնք ընտանիքի մեջ են մտել ամուսնության կամ տնտեսայության միջոցով, (տնտեսն այն կողմնակի անձն ե, վոր ընդունվում է աշխատավորական հողագործական տնտեսության—ծխի կազմի մեջ): Հարկավոր ե ընդգծել վոր որենքը գյուղացիական ընտանիքի կազմի մեջ մտնող անդամ համարում ե նաև նրանց, վորոնք ժամանակավորապես հետացել են իրենց ընտանիքից աշխատավորական դատումի գնալու համար, իսկ վորոնք որենքի հիման վրա

ծխից դուրս մնացած չեն համարվում։ Զինվորական ծառայության կանչվածի ընտանիքի անդամներ են համարվում նաև նրա բոլոր ազգականները, վորքան ել նրանք հեռավոր ազգականներ լինեն. որինակ, հորեղբայր կամ մորեղբայր, յեղբոր կամ քրոջ զավակներ և այն, բուլը խնամիները, այսինքն՝ կնոջ մերձավորները, անկախ մերձավորության աստիճանից. որինակ՝ զոքանչը, քենակալը և այն—այն բոլոր դեպքերում, յեմե այդ ազգականները, խնամիները և տնտեսանները անդամառ զորակոչվողի հետ միասին վարել են մի ընդհանուր տնտեսություն, կամ մինչև նրա զորակոչվելը ապրելիս են յեղել նրա միջոցներով. Որենսգրքով սահմանված արտօնությունները և առավելությունները տարածվում են զինվորական ծառայության մեջ գանվող բոլոր վերոհիշյալ անձանց, ինչպես և նրանց ընտանիքների վրա։

Վորոնք են այդ արտօնությունները, և ինչ և նրանց ելությունը,—այս բոլոր հարցերի վրա յենք մանրամասնորեն կանգ կտոնենք։

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂՈԴ-
ՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱ-
ՐԵՋՈՒՄ

Զինվորական ծառայողների համար աշխա-

տավորական հողոգտագործության և գյուղատնտեսության ասպարեզում սահմանված արտօնությունները և առավելությունները վերաբերում են. —

1) Հող հատկացնելուն, 2) հողաշինարարության, 3) հողոգտագործության իրավունքին, 4) արտադրական փոխառվության, գյուղատեսական ոգնության, 5) կենդանաբուծության, 6) անտառներից փայտ և կողմնակի ոգության, 7) անասնաբուժական ոգնության:

ՀՈՂ ՀԱՏԿԱ. 1). Զինվորական ծառայութելիք. թյան մեջ գտնվելու ամբողջ ժամանակի ընթացքում կարմիր բանակալինին հասնող հողամասը պահպան և այն աշխատավորական անտեսության մեջ, վորին նու մասնակցում է:

Ինչքան ժամանակով ել կարմիր բանակալինը գտնվելիս լինի ծառայության մեջ, հողաժինները պիտի հետեւին, վորպեսզի հողաշինարարության ընթացքում կարմիր բանակալինի այդ արտօնությունը չխախտվի:

2) Բացի սրանից, հողավիճ մարմինները, վորոնք իրենց արամագրության տակ աշխատավորական ոգտագործության համար հատկացված պահեստի հող ունին, առաջին հերթին, մասցած մասնությունը գրքուիկից և այլն): Գավառավային զինկոմբատը՝ հայտարարությունը ստա-

բոլոր քաղաքացիների հանդեպ նախապատվության կարգով՝ հող են հատկացնում հողագուրկի կարմիր բանակալինների ընտանիքներին:

3) Զինվորական ծառայողներից հրամանատարական և նրան համապատասխան կազմի այն անձինք, վորոնք անորոշ ժամանակով արձակուրդ են ստանում, գտնվում են պահեստի մեջ կամ իսպառ ազատվում են ծառայությունից (բանակում 5 տարուց վոչ պակաս ծառայելուց հետո), նույնպես և նրանք, վորոնք ունին «Կարմիր Դրոշի» շքանշան, անկախ ծառայության ժամանակամիջոցից, չեթե զինվորական ծառայությունից առաջ զյուղատնտեսությամբ են պարապել, — անպատճառ հող են ստանում ներթից, գուրս. սրա համար հիշյալ կարգի ծառայողները հայտարարություն են տալիս համապատասխան գավառային զինկոմբատին և իրենց հայտարարության մեջ ցուց են տալիս, թե արդյոք նրանք առաջ յեղել են աշխատավոր հողոգտագործողներ, ներկայումս վորքան հող ունին, ինչպես նաև — ընտանիքի անդամների թիվը: Այդ հայտարարությունների հետ պիտի ներկայացվեն նաև համապատասխան փառտաթղթեր (տեղական իշխանության կողմից տված վկայականներ), քաղաքածքներ հողավիճ մատյաններից, զինվորական ծառայության գրքուիկից և այլն): Գավառավային զինկոմբատը՝ հայտարարությունը ստա-

նալով, ուղղում ե համապատասխան հողային մարմիններին, վորոնք և հող են հատկացնում պահեստի ֆոնդից:

Պետք ե ընդգծել, վոր հողեր հատկացնելու դեպքում նախապատճեռն ե տրվում այն կարմիր բանակալիններին, վորոնք ընկերական հիմունքներով են ցանկանում կազմակերպել հողի ոգտագործությունը:

Հիշյալ կարգի դինվորական ծառայողները հող ստանալու մասին միջնորդություն սկսուի հարուցեն արձակվելու որից հետո մեկ տարվա ընթացքում:

ՀՈՂԱՇԻՆԱՐԱ- Հողաշինարարություն ա-
ՐՈՒԹՅԱՆ ՎԵ- սելով պետք ե հասկանալ
ՐԱԲԵՐՅԱԼԱՐ- գոյություն ունեցող կամ
ՏՈՆՈՒԹՅՈՒՆ- հատկացվելիք հողի ոգ-
ներ. ապօրծության կարգավո-
րումը:

Հողաշինարարության վերաբերյալ արտո-
նությունները կարող են վայելել. այն անձինք,
վորոնք ունին հողոգտագործության իրավունք, և
հողաշինարարական գործողությունները չպետք
ե խախտեն ուրիշների շահերը. Այդպիսի գոր-
ծողություններ են հանդիսանում հողերի հատ-
կացումը, նրանց բաշխումը, հողերի փոխան-
ցումը մի ֆոնդից մյուս ֆոնդը և այլն. Հողա-
շինարարության գործողությունների մերու-

բերյալ լմնգիրները տրվում են դավառային հողբաժիններին. Եթե կարմիր բանակալինները և նրանց ընտանիքները արդպիսի գործեր են ունենում, ապա այդ գործերը քննվում են հեր-
թից գուրս, և հողաշինարարության աշխա-
տանքների ծախքերի համար նրանցից վերց-
վում ե սահմանված կոպարների 50 տոկոսը,
այսինքն կեսը:

ՀՈՂԱՇԻՆԱՐԱ- Ամեն մեկը, վոր ստա-
ԾՈՒԹՅԱՆ Ի- նում ե հող, պիտի իր սե-
ՐԱՎՈՒԻՆՔ. վիական աշխատանքով մը-
շակի և ոգտագործի իր անտեսությունը:

ՑԵԹԵ աշխատավորական անտեսությունը
այս կամ այն պատճառով չի կարողանում ժա-
մանակավորապես ոգտագործել իրեն պատկա-
նող ամբողջ հողը կամ նրա մի մասը, ապա
որենքը արդպիսի դեպքերում թույլ ե տալիս
հողը տալ ուրիշին աշխատավորական վարձա-
կալության պայմանով մշակելու համար. ՑԵԹԵ
կարմիր բանակալինը դանվում ե զինվորական
ծառայության մեջ, ապա նրա ընտանիքին վե-
րապահվում ե իրավունք կարմիր բանակալինի՝
ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամա-
նակի և ծառայությունից արձակվելուց հետո
մի տարվա ընթացքում վարձով տալու իր հողը

կամ նրա մի մասը աշխատավորական վարձակալության պայմանով (կարմիր բանակալինի դինվորական ծառայության մեջ գտնվելու պատճառով ժամանակավորապես թուլացած անտեսություններում): Որենքը գլուղական խորհրդի և գավառային գործադիր կոմիտեների վրա պարտականություն և գնում անարգել տոմարագրելու այդ պայմանագրերը, ինարկելեթե նրանք համապատասխանում են որենքի պահանջներին:

Ծիփ ԲՅ.ԺԱ. Աշխատավորական հողանության ՊԱ. գործական անտեսության ՀԱՆ.ԶԼ. (ծիփ) բաժանությունն այն և, վոր ամբողջ ծիփ ողտագործության տակ գտնվող հողերը և գուէքը բաշխվում են ծիփի անդամների միջև: Ծիփի բաժանությունը պահանջելու իրավունքը ունի ծիփի ամեն մի անդամ, բայց այդպիսի իրավունք չի վերապահվում նրանց, ովքեր վեց տարի շարունակ իրենց աշխատանքով կամ միջոցներով չեն մասնակցել ծիփի ընդհանուր անտեսությունը վարելու գործում:

Կարմիր բանակալինին ծիփի բաժանության վերաբերյալ հարցում արվում են հետեւյալ արտօնությունները. վորքան ել տեվելու լինի նրա ծառայությունը, այդ հանդամանքը չի կա-

րող արգելվ հանդիսանալ պահանջելու անտեսության բաժանությունն ընդհանուր հիմունքներով. ինչ վերաբերում է ծառալությունից արձակված կարմիր բանակալիններին, ապա այդ իրավունքը նրանք վայելում են արձակվելուց հետո մի տարվա ընթացքում:

ՍԵՐՄԱՑՎԻ ՓՈ. Կարմիր բանակալինի ընկածության ՅԵՎ. տանիքը ոգավում ե՝ մատուցուկածնեան ՏԵՎ. ցած բոլոր քաղաքացինեկան ՈԳՆՈՒԹՅԱՆ րի հանդեպ առաջին հերզերերթյան ԱՐ. թին սերմացուի փոխարժությունները. վություն ստանալու իրավունքից: Հողմողկոմագի մարմինները սերմացուի փոխատվություն ստանալու դիմում տվողների իրավունքը վորոշելիս առաջին հերթին այդ հարցը վճռում են կարմիր բանակալինների կամ նրանց ընտանիքների վերաբերմամբ և ստհմանում են, թէ ինչ արտօնություններով, ինչ հիմունքներով կարելի լի նրանց սերմացու փոխ տալ:

Բացի սրանից հողալին մարմինների անորինության տակ գտնվող սերմագալիչ կայանները կարմիր բանակալինների սերմացու հացահատիկը մաքրում են առաջին հերթին, ձրիտբար կամ չնչին վարձատրությամբ. այդ արտօնությունները նրանք վայելում են և այն դեպքում,

լերը վարձակայսաններից նրանց բաց և թող-
նվում գյուղատնտեսական ինվենտար (մեքենա,
տրակտոր, բանող անառուն և ալին) ժամա-
նակավորապես ոգտագործելու համար:

Այստեղ հարկավոր ե հիշել և այն արտո-
նությունը, զոր արվում ե կարմիր բանակա-
յինների անտեսություններին վարկի տուղարե-
զում:

Յեթե կարմիր բանակայինը ցանկանում
է իր անտեսության համար ձեռք բերել (զնել)
գյուղատնտեսական այս կամ այն ինվենտարը,
սերմացու, պարարտանյութեր և գյուղատնտե-
սական արագորության այլ առարկաներ, ապա
նա կարող ե դիմել գյուղատնտեսական վարկի
ընկերության, (վարկային ընկերության) կամ
գյուղատնտեսական կոոպերատիվին՝ վարկ ստա-
նալու համար: Այդ վարկային հիմնարկություն-
ները վարկ տալիս նախապատվություն են տա-
լիս կարմիր բանակայիններին կամ նրանց ըն-
տանիքներին՝ բոլոր այլ աշխատավորական արն-
տեսությունների հանդեպ, այդ դեպքում կար-
միր բանակայինների սակավազոր անտեսու-
թյուններին փոխատվությունը տրվում է մեկից
մինչև յերեք ստարի ժամանակով, իսկ միջակ
և ավելի կարող անտեսություններին — մինչև
մեկ տարի ժամանակով:

ԿԵՆԴԱՆԱԲՈՒԺՈՒՀԻ. Կարմիր բանակայիններին
ԹՅՈՒՆ. պատկանող անասունները
հողային մարմինների կամ
գյուղատնտեսական կոոպերացիայի զուգավոր-
ման կայաններում գտնվող վորձերի (ցուկերի,
վարազների և խոյերի) հետ զուգավորելու հա-
մար կարմիր բանակայինների նկատմամբ սահ-
մանված վարձի 50 տոկոսի չափով զեղչ ե ար-
վում, այսինքն՝ սահմանված գնի կեսն ե վերց-
վում, իսկ յեթե կարմիր բանակայինը խիստ
չքավոր ե, ապա նրան պատկանող անասուննե-
րի զուգավորումը կատարվում է ձրիաբար: Զը-
քավորության հանգամանքը կարմիր բանակայի-
նը հաստատում է գյուղխորհրդից վերցրած հա-
մապատասխան վկայականով:

ԱՆՑԱՌԱՆՑՈՒՅԹԵՐ Կարմիր բանակայինին ար-
ԲԱՅՑ ԹՈՂՆԵԼՈՒ տոնալ պայմաններով բաց
ՄԱՍԻՆ. են թողնվում անտառանյուու-

թեր. առնասարակ արտօնյալ
պայմաններով, այսինքն՝ նվազագույն գներով
անտառանյութը բաց և թողնվում միայն չքավոր
աշխատավոր բնակչությանը. կարմիր բանակա-
յինի ընտանիքը անտառանյութեր ստանում է
առաջին հերթին. բացի սրանից ձրիաբար շինու-
թյան փայտ են ստանում հրամանատարական կազ-
մի, նաև անորոշ ժամանակով արձակուրդ ստա-

ցած, պահեստի մեջ գտնվող կամ իսպառ ծառայությունից արձակված անձերից նրանք, վորոնք կարմիր Բանակի մեջ ծառայել են 5 տարբուց վոչ պակաս, այլ և նրանք, վորոնք «Կարմիր դրոշի» շքանշան ունեն՝ վորքան տարի յել ծառայած լինեն, յեթե նրանք զինվորական ծառայությունից առաջ զբաղվել են գյուղատընտեսությամբ, վորպես աշխատավոր հողոգտագործողներ:

Հիշյալ կարգի զինվորական մարմինների միջնորդությամբ նույնպես ձրիաբար բաց ե թողնվում շինանյութ և այն դեպքում, յերբ նրանք զինվորական ծառայության մտնելուց առաջ զյուղատնտեսությամբ չեն պարապել, վորպես աշխատավոր հողոգտագործողներ, բայց վեց տարբուց վոչ պակաս ծառայել են կարմիր Բանակում:

Բացի այս բոլոր արտօնություններից, կարմիր բանակայիններին իրավունք ե վերապահվում արտօնյալ հիմունքներով կամ ձրիաբար անասուններ արածացնել խոտ հնձել և այլ կերպ անտառներից ոգտվել, համաձայն Հոգային ժողովրդական կոմիսարիատի կողմից հաստատված հատուկ կանոնների:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԴՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՅԻ ԳՈՎԵԿ Ե ՄՐՎՈՒՄ ՃՐԴԻԱԲԱՐ ԲՈԼՈՐԻՆ, ԲԱԿ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻԲՆՆԵՐԻՆ ԱՎԱՏԿԱՆՈՂ ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆԻՆՆԵՐԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՇՈՎԵԿ ՄԱԼԻՍ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ:

Բացի սրանից համաճարակների ժամանակ սպանված կամ պատվաստի հետեւվանքով սատկած անասունների, այլ և վոչնչացրած առարկաների և կերի համար գրամմական հատուցումը առաջին հերթին տրվում ե կարմիր բանակայիններին:

II ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

Անեն մեկի համար հասկանալի լե, վոր կարմիր բանակայինը, վորը, գտնվում ե զինվորական ծառայության մեջ, չի կարող միաժամանակ վարձու աշխատանք կատարել. Նա գրեթե ամբողջ որը զբաղված ե իր զինվորական գործով և մի վորեւ տեղ մշտական աշխատանք ունենալը հնարավոր չե. այլ բան ե, յերբ կարմիր բանակայինը վերջացնում ե իր ծառայությունը. Նախ և առաջ նա մտածում ե այն մասին, թե արդյո՞ք ինչպես ձեռք բերի ողաշտոն կամ վորեւ այլ գործ: Որենքը, նկատի ունենա-

լով այդ, մի շարք արտօնություններ եւ տալիս
աշխատանքի ասպարեզում, յեթե կարմիր բանա-
կալինը կանչվում եւ զինվորական ծառայության,
և այլ կարգի արտօնություններ են վերապահ-
վում նրան, յերբ նա ազատվում եւ զինվորական
ծառայությունից: Այդ բոլոր արտօնությունները
շատ կարենը են. յերբ բանվորներն ու ծառա-
յուղները կանչվում են զինվորական ծառայու-
թյան, նրանք պետք եւ հոգան մի քանի ամենա-
անհրաժեշտ կարիքներ, վորպեսզի կարողանան
թողնել իրենց տղւնն ու անտեսությունը և շատպ
մեկնել ծառայության վայրը:

Որենոր արտօնություններ սահմանելով՝
հնարավորություն եւ տալիս զինակոչիկներին
հոգալու իրենց հիմնական անհրաժեշտ կարիք-
ները, վորպեսզի նրանք հնարավորություն ու-
նենան առանց իրենց ընտանիքի մասին հոգա-
լու անմիջապես մեկնելու՝ ուր հարկն ե, և կա-
տարելու իրենց զինվորական պարտականու-
թյունները:

Այդ արտօնությունների վրա մենք կանգ
կառնենք մանրամասնորեն:

ԱՐՁԱԿՄԱՆ
ՆՊԱՍՏ.

ՅԵԹԵ բանվորը ու ծառա-
յուղողը, վորոնք ունեն մըշ-
տական կամ ժամանակավոր
աշխատանք, կանչվում են զինվորական ծառա-

յության, ապա վարձողը պարտավոր եւ նրանց
բավարարել աշխատավարձով մինչև աշխատան-
քը փաստորեն դադարեցնելու որը, ինչպես և
փոխհատուցում տալ չոգտագործված արձակուր-
գի համար, նաև տալ արձակման նպաստ: «Վար-
ձող» ասելով պետք եւ հասկանալ պետական,
հասարակական, կոոպերատիվ և մասնավոր ամեն
տեսակ հիմնարկ-ձեռնարկությունները ու արն-
տեսությունները: Վարձողը զինվորական ծառա-
յության կանչվող բանվոր-ծառայողին փոխարինե-
լու համար պարապոր եւ ժամանակավոր աշխա-
տավիցներ հրավիրել վոչ ավելի քան յերկու ամ-
սով, մինչև վերջնականապես պարզվի զորակոչ-
վող բանվոր ծառայողին համուրդ (օտքոչկա)
տալու կամ զինվորական ծառայության համար
նրան անպետք ճանաչելու հարցը:

ՅԵԹԵ զորակոչվողը համուրդ եւ ստանում
կամ ծառայության համար անպետք եւ համար-
վում, ապա վերադառնում եւ իր նախկին պաշ-
տոնատեղը և ստանում եւ իր նախկին պաշ-
տոնը:

Բացի սրանից, զորակոչվածը վերոհիշյալ
պատճառներով նախկին պաշտոնին վերադառ-
նալու դեպքում աշխատավարձ եւ ստանում և
այն որերի համար, յերբ նա ճանապարհին ե
զանվել:

Այսուեղ հարկավոր ե ընդգծել մի կարևոր հանդամանք: Զօրակոչվածք, վորո համուրդ ե ստանում կամ ծառայության համար անպետք ե համարվում, պարտավոր ե այդ մասին հայտնելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում վերադառնալ իր նախկին պաշտոնատեղը: Հակառակ դեպքում, չեթե ժամանակին չներկայանալու հարգելի պատճառ չկա, նու կարող ե զրկվել արտօնությունից, և նրա նախկին պաշտոնը կարող ե հանձնվել ուրիշին:

ԼՐԱՅՈՒՑԻՉՔ ՆՊԱՍՏՆԵՐ. Լրացուցիչ նպաստներ, սելով պետք ե հասկանալ այն նպաստները, զորոնք արվում են 1) յերեխային կերակրելու համար, 2) նորածնին խնամելու, 3) աշխատավորի կամ նրա ընտանիքի անաշխատունակ անդամների թաղման համար:

Զօրակոչվածի վայելած արտօնությունն այն ե, վոր յեթե նա ապահովագրված ե յեղեւ ապա այդ նպաստները մեկ ամսվա ընթացքում զորակոչի պահից սկսած՝ սոցապգանձարկը սալիս ե նրա ընտանիքին: Յերեխային կերակրելու նրա պաստը արվում ե 9 ամսվա ընթացքում, յեթե յերեխան ծնվել ե զորակոչից հետո մինչև մեկ ամիս լրանալը, իսկ նորածնին խնամելու նպաստը արվում ե միանվագ, ծննդաբերությունից:

մեկ ամիս առաջ: Այս մասին պետք ե համապատասխան վկայական ներկայացնել սոցապգանձարկին:

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՊՈՐՃ-ԳՈՐԾ ԳՏՆԵԼՈՒ ԿՐՈՒ և ԺՈՂԿՈՄԽՈՐԾԻ 1925 թ. ՀԱՄԱՐ ԱԲՁԱԿ- մայիսի 29-ի որենքով ՎԱԾՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ, աշխատանքի ասպարեզում ԱՐՑՈՒՄԻԹՅՈՒՆ- արտօնություններ են արբ- ՆԵՐ.

վում զինվորական ծառայությունից իսպառ արձակվածներին և պահեստում կամ անորոշ ժամանակով արձակուրդում գլուխվող անձանց. (Որ. Փող. 1925 թ. № 37, հոդ. 175):

Հիշալ կարգի արձակվածներին, յեթե նըրանք ծառայել են իսկական ծառայության համար սահմանված ժամանակից վոչ պակաս, որենքը արտօնություններ ե վերապահում այն դեպքերում, յերբ նրանք աշխատանք են ձեռքբերում բորսայի միջոցով, նաև այն դեպքերում, յերբ արձակվածները իրենք առանց բորսայի աշխատանք են ձարում: Ուրեմն, որենքը չիպահանջում, վոր արձակվածը արտօնություններից ոգտվելու համար անպատճառ ցուցակագրվի աշխատանքի բորսայում: Նա կարող ե բորսային դիմել միան այն դեպքում, յերբ ինքը, արձակ-

վածոր, չի կարող իր համար աշխատանք գրանել:

Այստեղ հարկավոր ե ընդգծել այն հանգամանքը, զոր համաձայն հիշյալ որենքի, արտոնությունները արձակվածին տրվում են զորոց ժամանակով. այդ ժամանակը անցնելուց հետո արձակվածը զրկվում է սահմանված արտօնություններից:

Հսա որենքի, յեթե արձակվածը բորսայի միջոցով գործ ե գտնում, ապա արտօնությունները նրան տրվում են այն պահից. յերբ նա ցուցակագրվում ե բորսայում, —մինչև այն ժամանակ, յերբ բորսան նրան առաջին անգամ մշտական աշխատանքի կուղարկի: Արձակվածը բորսայում ցուցակագրվել կարող ե մեկ տարվա ընթացքում այն որից, յերբ նա արձակվելուց հետո հաշվառման ե լենթարկվում զինկոմբրատում. Բացառիկ գեպքերում բորսան կարող ե յերկարացնել արտօնություններից ողտվելու ժամանակը՝ մինչև այն որը, յերբ բորսան արձակվածին յերկրորդ անգամ աշխատանքի կուղարկի: Այդ յերկարացումը կարող ե տեղի ունենալ այն գեպքում, յեթե արձակվածը այս կամ այն պատճառով աշխատանքի մեջ ե յեղել վեց շաբաթից պակաս. յեթե արձակվածը գործ է զրել առանց բորսայի, ապա նա կարող ե ող-

տվել արտօնություններից մեկ տարվա ընթացքում՝ հաշված այն պահից, յերբ նա հաշվառման ե լենթարկվում զինկոմբրատում: Վորհնք են այդ արտօնությունները:

ՊՐՈՖՄԻՌՈՒԹՅՈՒՆ. Եյական արտօնությունը, ՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵ- զոր արվում ե հիշյալ ՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑ. միութենական որենքով ՆԵԼԸ. զինվորական ծառայությունից իսպառ արձակվածներին, պահեստում կամ անորոշ ժամանակով արձակուրդում գտնվող անձանց, այն ե, զոր հիշյալ կարդի բոլոր անձինք հավասարեցվում են պրոֆմիությունների անդամներին. այդ նշանակում ե, զոր աշխատանքաներանց ուղարկում ե այս կամ այն աշխատանքին, զորպես պրոֆմիության անդամների:

ՅԵԹԵ զինվորական ծառայությունից արձակվածը աշխատանք ե վնատը վոչ բորսայի միջոցով, ապա վարձակալը պարտավոր ե նրա հետ վարվելու՝ փորպես պրոֆմիության անդամի: Հիմնարկության կամ ձեռնարկության վահանի տեղիում չի կարող մերժել արձակվածին այն պատճառով, զոր նա գործ ե գտել վոչ աշխատանքով: Արձակվածին կարելի յէ հանել աշխատանքից միայն այն գեպքում, յեթե նա աշխատանքի համար պիտանի չի և առնասարակ չի համապատասխանում այն պահանջնե-

րին, վորոնք անհրաժեշտ են ավյալ աշխատանքը արդյունավետ կերպով կատարելու համար:

ՊԱՇՏՈՆՆԵՐԻ Մյուս եյական արտո-
բրոնՅԱ. նությունը, վոր նախատես-
ված ե որենքով, հետևյալն ե. վորոշ պաշտոն-
ներ անպատճառ հատկացվում են բացառապես
զինվորական ծառայությունից արձակվածներին
(ըրոնլա):

Որենքը ստուգանում ե, վոր միլիցիայի, ան-
տառային պահպանության, ֆինանսական հիմ-
նարկների, կալանավայրերի, ուղղիչ տների անձ-
նական կազմերը լրացնելու համար, ինչպես և
պահեստների և տռետրական տների պահակա-
խմբեր կազմելիս բացառապես գործի պետք ե
ընդունվեն զինվորական ծառայությունից ար-
ձակվածները:

Միաժամանակ որենքը կատեղորիկ կեր-
պով առաջարկում ե աշխարհաներին բացար-
ձակ նախապատփություն տալ արձակվածներին
բոլոր մյուս գործազուրկների հանդեպ այն
գեղքերում, յերբ պետական, հասարակական և
մասնագոր հիմնարկ-ձեռնարկություններում
բացվում են պարետների, ցրիչների, պահա-
պ օնների, սուրհանդակների, դռնապանների
և նման այլ պաշտոններ, ինչպես և գործա-

րաններում վոչ-վորակյալ աշխատանքների հա-
մար ազատ տեղեր: Այդ բոլոր դեպքերում
աշխարհաները պարտավոր են նախապատփու-
թյան կարգով աշխատանքի ուղարկել զինվորա-
կան ծառայությունից արձակվածներին: Աշխ-
արսայի այդ պարտականությունը վերանում ե
միայն այն դեպքում, յեթե ստանձնելիք պաշ-
տոնի համար աշխատավորից անձնական վստա-
հություն և բարեհուսություն ե պահանջվում:

**ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ՀԱ-
ՄԱՐ ՎԱՐՉՈՒ ԱԾ-
ԻԱՏԱՆՔ ԶԻ ՊԱ-
ՆԱՎԱՍ ԿԱՐՈՂ Ե պահան-
ՀԱՆՉՎՈՒՄ.** Համաձայն գործող ո-
ւ բենքների գործազուրկը
ԽԱՏԱՆՔ ԶԻ ՊԱ-
ՆԱՎԱՍ ԿԱՐՈՂ Ե պահան-
ՀԱՆՉՎՈՒՄ. յել միայն այն դեպքում:

յեթե նա մինչե գործազրկությունը կատարած
վարձու աշխատանքի վորոշ ստաժ (տարիներ)
ունի: Որենքը արձակվածների նկատմամբ բա-
ցառություն ե անում: Արձակվածները, անկախ
վարձու աշխատանքի ստաժից, վայելում են գոր-
ծազրկության նպաստ ստանալու իրավունք
Այս տեսակետից, յեթե արձակվածը աշխատել
ե վարձով նույն իսկ յերկու շաբաթ և այս
կամ այն հարգելի պատճառով մնացել ե առանց
գործի, նա ստանում ե գործազրկությաննպաստ:

Անա այն արտօնությունները, վոր վայե-
լում են զինվորական ծառայությունից արձակ-

հետ հավասարապես։ Այս դեպքերում նրանք ազատվում են ուսման վճարից։ Այստեղ պետք է ընդգծել, վոր որենքը այդ արածնութիւնունը վերապահում ե նաև զինվորական ծառալութիւնից բոլորովին արձակվածներին և անորոշ ժամանակ արձակուրդում գանվողներին։ միան այդ արտօնությունից ոգտվելու իրավունքը որենքը սահմանափակում ե մեկ աարով, ոկտած արձական որից։

Վերոհիշյալ բոլոր արածնությունները զայեւում են նաև կարմիր բանակի հրամանատարական, վարչական, քաղաքական, բժշկական և անասնաբուժական կազմին պատկանող անձերի գավակները։

IV. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂ- ԶԱՄԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԵՉՈՒՄ.

Առողջապահության ասպարեզում կարմիր բանակայինները և նրանց ընտանիքները մեծ արածնություններ են վայելում հիվանդանոցներ, ծննդաբերական կայաններ և այլ բուժական հիմնարկություններ ընդունվելիս։ Անկախ այն հանգամանքից, թե արդիոք կարմիր բանակայինը ապահովագրված ե, թե վոչ, նրա ընտանիքի անդամները հավասարեցվում են ապահովա-

գրված բանվորների ընտանիքներին, և նրանց արվում են մի շաբթ արտօնություններ։

Եյտկան արտօնությունները հետևալիներն են։ —

1. Կարմիր բանակայինների ընտանիքների հիվանդ անդամները ընդունվում են բուժարաններ, ծննդաբերական կայաններ և այլ հիմնարկներ առաջին հերթին, ձրի բժշկական ոգնություն են ստանում քաղաքացիական բուժարաններում, ապահովագրված բանվորների ու ծառայողների բնտանիքների հետ հավասարապես։

2. Զինվորական ծառայությունից հիվանդության կամ հաշմանդամության պատճառով արձակվածները քաղաքացիական հիմնարկություններում ստանում են բժշկական ոգնություն, թե բուժարան հաճախելով (յերթեվեկ) և թե հիվանդանոցում պարկելով (ստացիոնար)։

Բացի սրանից նույն կարգի արձակվածներին ձրիաբար արվում են պրոտեզներ (որինակ՝ արհեստական վոտք, ատամներ և այլն) ապահովագրվածների հետ հավասար հիմունքներով։ այդ արտօնությունից ոգտվելու իրավունքը չի ստանանափակված ժամանակով, և հիվանդը միշտ կարող է դիմել բուժարաններին մինչև այն հիվանդությունը բժշկվելը, վորի պատճառով նա

արձակված ե ծառայությունից, կամ մինչև ժամանակավոր պրոտեզի կարիքն անցնելը:

Վ. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

Կարմիր բանակը բաղկացած է զլատվորապես աշխատավոր գյուղացիներից. հետեւապես՝ կարմիր բանակայինին ամենից շատ հետաքրքրում են այն արտօնությունները, վորոնք զերաբերում են միամնական գյուղատնտեսական հարկին: Հենց այդ հարկի նկատմամբ խորհրդացին իշխանությունը կարմիր բանակայինների տնտեսություններին տալիս է մի շարք կարեվոր արտօնություններ: Բացի սրանից, կարմիր բանակայինները և նրանց ընտանիքները ըստ որենքի վայելում են արտօնություններ և այլ հարկերի ու առողջերի վերաբերմամբ, այդ արտօնությունների վրա մենք և կանգ կառնենք:

ՄԻԱԾԱԿԱՆ ԳՅՈՒՆ Ամեն մի գյուղացու ՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ լավ հայտնի յե գյուղհարկի

ՀԱՐԿ. գանձման կարգը. նրա համար հասկանալի յե այն բանը, թե ինչ նշանակություն ունի, յերբ հարկի շափը վորոշելիս տվյալ անտեսության շնչերի թիվը շատ ե: Այդ նշանակում ե, վոր ամեն մի շնչին ընկնում ե

ավելի քիչ հող, և հարկը ավելի քիչ են վերցնում: Հենց այդ տեսակետից կարմիր բանակայինին արվում է այն արտօնությունը, որ նրա տնտեսությունից գանձվելիք հարկի քանակը վորոշելիս նրա ընտանիքի շնչերի թվի մեջ հաշվում է նաև հարմիր բանակայինը, թեպես նա բացակայում, գտնվում է բանակում:

ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱ-

Կարմիր բանակայինի ՏԵԼՔ. ընտանիքը աղատվում է գանձվելիք հարկից, յեթե նրա ընտանիքի կազմի մեջ բացի նրանից այլ աշխատունակ տղամարդ չկա և յեթե յուրաքանչյուր շնչի՝ հարկման լենթակա հող և հողի վերածված անտառն ե ընկնում վոչ ավելի, քան հողի այն քանակը, վորով տվյալ վայրում ապահովվում ե յուրաքանչյուր շունչ:

Միասնարկի որենքի մեջ գանազան վայրերի համար ցուցակներով սահմանված ե հողային այդ միջին ապահովությունը:

Կարմիր բանակայինի ընտանիքը աղատվում է միտսնարկ վճարելուց և այն դեպքում, յերբ նա վար ու ցանքի տնտեսություն ունի և գուրկ ե լծկան անասուններից: Նույն արտօնությունը արվում է վար ու ցանք չունեցող

անտառապահական անտեսություններին, վորոնց
անասունների ընդհանուր թիվը վերածած լեզ-
ջուրավոր անասունների, 5 գլխից ավելի չեւ:

ՀԱՐԿԻՑ ԿԻՄՈՎ կարմիր բանակալինի աղն-
ջկի ԱԶԱՏԵԼԲ. աեսությունը, վորը տվյալ
վայրի հողալին ապահովության նորմալի (չափի)
մեկ ու կես քանակից ավելի հող չունի, և աղն-
տեսության մեջ բացի կարմիր բանակալինից
այլ աշխատունակ աղամարդ չկա, աղատվում եւ
գանձգելիք հարկի կեսից:

ՌԵՆՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ համաձայն գործող որենքի՝
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ. ռենտային հարկի լենթարկ-
վում են քաղաքալին գծի մեջ գանվող հողերը,
և ռենտան գանձվում եւ հոգուտ տեղական բյու-
ջելի:

Քաղաքալին բնակավայրերում կարմիր բանա-
կալինների կամ նրանց ընտանիքների այն հողա-
մասերը, վորոնք մշակվում են առանց վարձու աշ-
խատանք կիրարկելու, ինչպես նաև այն հողա-
մասերը, վորոնք բռնված են բնակելի շենքե-
րով, վորտեղ ապրում են կարմիր բանակալին-
ների ընտանիքները, յեթե այդ շենքերը վարձով
չեն տրվում, կարող են գալքործ կոմի առանձին
վորոշումներով աղատվել ռենտային հարկից:

ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԻՑ կարմիր բանակալինները
ԱԶԱՏԵԼԲ ու նրանց ընտանիքները ա-
ղատվում են վրոշմատուրք վճարելուց այն դեպ-
քերում, յերբ նրանք միասնարկից աղատվելու դի-
մում են տալիս, կամ յերբ նրանց ազդականնե-
րը կարմիր բանակալիններին վորոնելու և տեղն
իմանալու մասին հայտարարություն են տալիս
համապատասխան մարմիններին:

Կարմիր բանակալինները աղատվում են նաև
վորասրդական առւրգից:

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵ- Բայցի պետական հարկե-
րի վերաբերյալ ԱՐ- րից, վորոնք գանձվում են
ՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ հոգուտ պետական գանձա-
րանի, կամ և տեղական հարկերի: Այդ հարկերը
գանձվում են տեղական կարիքները բավարա-
րելու համար:

Գլխավոր արտօնությունները, վորոնք աբր-
վում են կարմիր բանակալիններին ու նրանց
ընտանիքներին, հետևյալներն են:

1. **ՍՐԳՈՇՆԱՐԵՐԱԿԱՆ ԱՐԳԻՆՆԵՐԻ** և բանջա-
րանոցների հարկից, յեթե կարմիր բանակալին-
ներին պատկանող՝ քաղաքներում գանվող այգին
կամ բանջարանոցը ոգտադրուծվում և մշակվում
և ընտանիքի անդամների ջանքերով, առանց
վարձու աշխատանք գործադրելու, և յեթե մեկ
ընտանիքին բնկնող ալգու տարածությունը

1092 քառ. մետրից ավելի չե (240 քառ. սահման), իսկ բանջարանոցի տարածությունը 2185 քառ. մետրից (480 քառ. սաժ.) ավելի չե:

2. Զիերի և յերթեվեկող կառքերի հարկից. սակայն այս գեպքում ազատվում են կարմիր բանակալինի ընտանիքի միայն մեկ ձին, յեթե այդ ձին չի պատկանում յերթեվեկող ձիերի թվին, և յեթե բացառապես ոգտագործվում է կարմիր բանակալինի ընտանիքի տնալին տնտեսության կարիքների համար:

3. Կարմիր բանակալինները և նրանց ընտանիքի անդամները նույնպես ազատվում են անձնական տոմարագրության տուրքից (պրոպօնական սեղման շեմայում առաջարկված է առողջական տուրքության տուրքից):

Իացի սրանից կարմիր բանակալինները ազատվում են նույնպես յեկամտահարկ վճարելուց, բացի այն գեպքերից, յերբ նրանք յեկամուտ են ստանում վոչ վարձու աշխատանքից:

Առաջին հայացքից թվում են, փոք յեկամբանակարկի վերաբերմամբ արտօնությունը եցական նշանակություն չի կարող ունենալ կարմիր բանակալինի համար, քանի փոք նա զինվորական ծառայության մեջ ե և վոչ մի յեկամուտ չի կարող ստանալ: Իաց այդ այդպիս չե: Շատ կարմիր բանակալիններ, վորոնք իրենց ծառայության վայրում ունեն ընտանիք և

առհասարակ մերձավորներ, ոգտվելով ազատ ժամանակ զորանոցից բացակայելու՝ նրանց վերապահված իրավունքից, նսարավորություն ունեն զբաղվելու այն գործով վորը կապված է նրանց նախկին զբաղմունքի հետ, և այդպիսով ունենալու վորոշ յեկամուտ: Որենքը միայն վերջին գեպքում վերցնում է յեկամտահարկ, յեթե հարկման կիսամյակի ընթացքում նրանց ստացած յեկամուտը ավելի յե 300—500 ռուբլուց՝ նայած տեղական պայմաններին:

Անա այն եյտական արտօնությունները, վորոնք տրվում են կարմիր բանակալիններին և նրանց ընտանիքներին հարկերի ու տուրքերի վերաբերմամբ:

Վ. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Որենքը կարմիր բանակալինին և նրանց ընտանիքներին, նաև զինվորական ծառայությունից ազատվածներին բնակարանալին հարցում տալիս ե մի շարք եցական արտօնություններ: Այս արտօնությունները մեծ նշանակություն ունեն հենց այն տեսակետից, փոք կարմիր բանակալինը, գիտակցելով, փոք իշխանությունը հոգում ե նրա ընտանիքի մասին, կարող ե հանգիստ կերպով կատարել իր ծառայությունը:

Կարմիր բանակալինի ընտանիքի անդամները վայելում են հետեւալ արտօնությունները: —

ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ. Յեթե կարմիր բանագլածունակիր ժամանակակիր ժամանակակիր անդամականացնելու նրա վորոնք մինչև նրա ՅԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ. զինվորական ծառայության կանչվելը ապրում ելին նրա ծախքով և պայմանագրի հիմունքներով վարձել են բնակարան (պայմանագրիը — այդ վորոշ համաձաննություն են, վորը առնասարակ լինում ե գրավոր կերպով ձեվակերպված), ապա պայմանագրի ժամանակը անցնելուց հետո նույն պայմանագրիը ելի շարունակում ե ուժ ունենալ, այսինքն՝ վերանորոգվում ե նախկին պայմաններով. Այդ արտոնությունը ետական ե այն տեսակետից, վոր անկախ տնատիրոջ համաձաննությունից կարմիր բանակայինի ընտանիքը շարունակում ե բնակարանում ապրել հին պայմաններով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ կարմիր բանակայինի ընտանիքը. նիքի անդամները, վորոնք մինչև նրա ծառայության կանչվելը նրա ծախքով են ապրել, բնակարանային վարձի վերաբերմամբ հավասարեցվում են պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների բանվորներին ու ծառալողներին, վորոնք նվազգույն աշխատավարձ են ստանում: Բանվորների և ծառալողների համար այդ նվազագույն աշ-

խատավարձը ըստ նոր բնակարանային որենքի սահմանված ե մինչեւ քսան ոռությի: Համաձայն այդ որենքի նրանք իրենց բունած բնակարանի 1 քառ. մետր տարածության համար վճարում են 5,5 կոպ. (մեկ քառ. մետրը = 1,98 քառ. արշ.): Կարմիր բանակայինի ընտանիքի անդամները, վորպես բանվորներին ու ծառալողներին հավասարեցված, վճարում են 1 քառ. մետր տարածության համար նույնութեան 5,5 կոպ.:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՆ Առնասարակ պետք ե ընդ-ՑԻՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՆ գծել, վոր բնակարանային ՐԱՆՍՑԻՆ ՀԱՐՑՈՒՄ որենքով բանվորներին ու ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ծառալողներին վերապահ-ԾԱՌԱՅՑՈՂՆԵՐԻՆ ված արտոնությունները ՀԱՎԱՍԱՐԵՑՆԵԼՅ. վայելում են և կարմիր բա-նակայինները ու նրանց ընտանիքները: Այդ ար-տոնությունների ետական կետերը հետևականներն են. —

ա) գավառակային կենտրոններում (Ղա-մարլու, Ստեփանավան, Աշտարակ և այլն) և բանվորական տարածում (Աղանձերդի գյուղ, Մարտունավան, Սանահին կայարան, Սար-դարաբատ և այլն) բնակարան վարձելու գեպ-քում բնակարանային վարձը չի կարող ավել-լինել այն կոպարներից, վորոնք որենքով սահ-

մանված են բանվորների և ծառայողների համար.

բ) տվյալ ամսի բնակարանալին վարձը վը-ձարում են հաջորդ ամսի 10-ից վոչ ուշ:

գ) վարչական կարգով վատարումը կարող է տեղի ունենալ այն դեպքում, յերբ քաղխորհուրդները և գործկոմները կամ վտարող հիմնարկությունները վարչվողներին կարածագրեն համապատասխան բնակարան և փոխադրական միջոցներ և այլն:

Մենք այստեղ յերկար կանգ չենք առնում այդ բոլոր արտօնությունների վրա։ Արգարադատության ժողովրդական կամիսարիալը հրատարակել ե բնակարանալին որենքի մասին մի գիրք, վորակեղ այդ բոլոր հարցերը պարզաբանված են։

VII ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԸՆ- ՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՇԱՀԵՐԻ ՊԱՇ- ԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐ- Խորհրդավին իշխանությաւնը, ՄԻՆՆԵՐԻ ՊԱՐ- արարով մի շարք արտօնություն-
ԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ներ կարմիր բանակալին-
ներին ու նրանց ընտանիքներին, շահագրգուլած
ե, վոր այդ արտօնությունները անշեղ կերպով
կիրարկվեն կրանքում, և կարմիր բանուկալին-

ների ու նրանց ընտանիքների իրավունքները
ու շահերը խախտվելու դեպքում պաշտպանվին։
Այս տեսակետից չ. Ս. Խ. Հ. իշխանության
բոլոր մարմինների վրա պարտականություն
ե դրվում ամենից առաջ կատարելու կարմիր
բանակալինների իրավունքներն ու շահերը
պաշտպանող որենքները։ Բոլոր պետական մար-
մինների վրա պարտականություն ե դրվում հա-
տուկ ուշադրության առնել իրենց մոտ ծագող
և քննվող այն բոլոր գործերը, վորտեղ կարմիր
բանակալինի կամ նրա ընտանիքի շահերն են
շոշափվում, աչքի առաջ ունենալով այն հանգա-
մանքը, վոր զինվորական ծառայության մեջ
գտնվող կարմիր բանակալինի բացակայության
ժամանակ այդ շահերը չեն կարող պատշաճ
պաշտպանություն գտնել։


ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ Մասնավորապես որենքը գա-
գործկուՄՆԵՐԻ վառակալին զործկոմների վրա
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ. պարտականություն ե դնում
պաշտպանելու կարմիր բանակալինների և նրանց
ընտանիքների իրավունքներն ու շահերը այն
դեպքերում, յերբ այդ իրավունքները խախտում
են պետական հիմնարկությունները, առանձին
պաշտոնյաները, հասարակական կազմակերպու-
թյունները կամ մասնավոր քաղաքացիները։

Գավառակային գործկոմները պարտավոր են նույնպես գործոն աշակեցություն ցուց տալ իրենց գիմող կարմիր բանակալիններին և նրանց ընտանիքներին նրանց շահերը պաշտպանելու գործում. նրանք պետք ե անհրաժեշտ դեպքերում միջոցներ ձեռք առնեն խնամակալություն նշանակելու կարմիր բանակալինների ընտանիքների փոքրահասակ անդամների վրա և հսկողություն ունենան, վոր խնամակալությունը իր պարտականությունները կատարի. պետք ե պաշտպանեն կարմիր բանակալինի շահերը այն արտելների, կոռպերատիվների, ընկերությունների ընդհանուր ժողովներում, վորոնց անդամ և նաև այլն:

Բացի վերոհիշյալից, գավառական գործկոմները կարող են իրենց կողմից լիազորված անձանց միջոցով ամեն տեսակ հայցեր հարուցանել դատարաններում, յերբ խախտվում են կարմիր բանակալինների կամ նրանց ընտանիքների իրավունքները. որինակ՝ յերբ կնքվում են նրանց համար աշկարա անձեռնոտու գործարքներ ծխի գույքի վերաբերմամբ, մասնավորապես՝ ծալքահեղ կարիքի հետեանքով, յերբ խախտվում ե բնակելի տարածությունից ոգտվելու նրանց իրավունքը, կնոջն ու զավակներին զրկում են ապրուստի միջոցներից, անկանոն կերպով մաս են հանում

ընտանեկան գույքից կամ անկանոն բաժանություն են անում և այլն:

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ՅԵթե այս բոլորի վրա ավելի էնդ ԴԱՏԱԽԱՉՈՒ- լացնենք նաև այն, վոր դատավորությունը առանական գործությունների և մասնավոր անձանց գործողությունների որինականության վրա կարմիր բանակալինների և նրանց ընտանիքների նկատմամբ, ապա պետք ե ընդգծենք, վոր կարմիր բանակալինների և նրանց ընտանիքների իրավական և նյութական վիճակի պաշտպանությունը լիովին ապահոված ե գործող որենքներով:



«Ազգային գրադարան



NL0220905

32. 969

ԳԻՒՅ 15 ԿՈՊ.

ՀԱԽՑ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Թուս-հայերեն իրավաբանական բառարան.
Գլուղմարհուրդների դատական սեկցիաների մա-
սին (մատչ. պարզաբ).

Նույնը թուրքերեն.
Գլուղմարհուրդների իրավունքներն ընդլայնելու
մասին (մատչելի պարզաբանութ).

Նույնը թուրքերեն.
Ամուսնության, ընտանիքի և խնամակալության
մասին (մատչելի պարզաբանութ).

Նոր բնակարագին որենք (մատչելի պարզաբան-
նութ).

Մասնագոր բնակարանային շինարարությունը և
խորհրդակին որենսդրությունը (մատչելի
պարզաբանութ).

Ո՞վ և գատախազը և ի՞նչ աշխատանք և կատա-
րում նա գլուղում (մատչ. պարզաբ).

Կենցաղադին հանցանքները ՀՍԽ Հանրապե-
տության մէջ

Նույնը թուրքերեն (մամուլի տակ և).
Կարմիր բանակալինների և նրանց ընտանիք-
ների արտօնությունների մասին (մատչելի
պարզաբանութ).

Բատրակների իրավունքների և պարտականու-
թյունների մասին—հարց և պատասխաննե-
րի ձևով (մամուլի տակ և):

Գլուղմարհուրդների գրախանութ.